

ԱՆՉԱՓԱՎԱԿԱՅԻ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հանցագործությունների կանխարգելմանը և իրավախախտների հետ վարվելաձևին նվիրված Միավորված ազգերի կազմակերպության վեցերորդ կոնգրեսի ընդունած 4 բանաձևով կոչ է արվել մշակել անչափահասների նկատմամբ արդարադատության իրականացման և հոգատարության դրսևորման ստանդարտ կանոններ, որոնք կարող էին մոդել հանդիսանալ անդամ պետությունների համար: 1985 թ-ի նոյեմբերի 29-ի ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 40/33 բանաձևով հաստատվել է անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ ՄԱԿ-ի ստանդարտ կանոնները՝ «Պեկինյան կանոններ» այսուհետ (Կանոններ): Նվազագույն ստանդարտ կանոնները հատուկ ձևակերպված են այնպես, որպեսզի հնարավոր լինի դրանք կիրառել իրավական տարբեր համակարգերի շրջանակներում և միաժամանակ հաստատել անչափահաս իրավախախտի հետ վարվելաձևի մի քանի նվազագույն ստանդարտներ անչափահասի՝ գոյություն ունեցող ցանկացած սահմանման և անչափահաս իրավախախտների հետ վարվելաձևի ցանկացած համակարգի դեպքում: Կանոնները, բոլոր դեպքերում, պետք է գործածվեն անաչառ և առանց որևէ խտրականության: Այսպես, 1.1-1.3 կանոններում մատնանշված է անչափահասների նկատմամբ հիմնարար սոցիալական քաղաքականությանը հատկացված դերի կարևորությունը, մասնավորապես անչափահասների կողմից կատարվող հանցագործությունների, իրավախախտումների կանխման գործում: 1.4 կանոնում անչափահասների նկատմամբ արդարադատությունը սահմանվում է որպես սոցիալական արդարության համակարգի ապահովման բաղկացուցիչ մաս, իսկ 1.6-ում մատնանշվում է անչափահասների նկատմամբ արդարադատության համակարգի անընդհատ կատարելագործման անհրաժեշտությունը, միաժամանակ անչափահասների վերաբերյալ սոցիալական առաջընթաց քաղաքականություն մշակելու համար միջոցառումների ձեռնարկումը՝ ամբողջությամբ հաշվի առնելով այդ համակարգի անձնակազմի աշխատանքների անընդհատ բարելավման անհրաժեշտությունը:

ՀՀ-ի կողմից վավերացված և իրավաբանորեն պարտադիր միջազգային փաստաթղթերին համապատասխանության տեսանկյունից ներպետական օրենսդրությամբ նախատեսված է անչափահասների քրեադատավարական կարգավիճակից բխող որոշակի առանձնահատկություններ: Այսպես.

Անչափահասը որպես քրեական դատավարության սուբյեկտ կարող է հանդես գալ կասկածյալի, մեղադրյալի, ամբաստանյալի, տուժողի, վկայի կարգավիճակով: Անչափահաս կասկածյալի, մեղադրյալի, տուժողի իրավունքները նրա փոխարեն, քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով, իրականացնում է նրա օրինական ներկայացուցիչը: Տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչներ են համարվում նրանց ծնողները, որդեգրողները, խնամակալները կամ հոգաբարձուները, որոնք քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացնում են դատավարության համապատասխան անչափահաս

մասնակցի օրինական շահերը: Օրինական ներկայացուցիչ չունենալու դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմինը տուժողի, կասկածյալի կամ մեղադրյալի օրինական ներկայացուցիչ է նշանակում խնամակալության և հոգաբարձության մարմին: 14 տարին չլրացած վկայի օրինական ներկայացուցիչը, իսկ քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ՝ նաև առավել բարձր տարիքի անչափահասի օրինական ներկայացուցիչն իրավունք ունի իմանալ ներկայացվող անձին քրեական վարույթն իրականացնող մարմին կանչելու մասին և մասնակցել քննչական կամ այլ դատավարական գործողությանը՝ ուղեկցելով նրան:

Անչափահասի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառել թույլատրվում է միայն այն դեպքում, երբ նրան վերագրվում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանքների կատարում, այսինքն, որևէ դեպքում ոչ մեծ ծանրության հանցագործության համար անչափահասի նկատմամբ կալանավորումը, որպես խափանման միջոց չի կարող կիրառվել: Միայն անչափահասի նկատմամբ կարող է կիրառվել այնպիսի խափանման միջոց ինչպիսին է հսկողության հանձնելը: Հսկողության հանձնելն այն է, երբ անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի ծնողների, խնամակալների, հոգաբարձուների կամ փակ մանկական հիմնարկների վարչակազմի վրա, որտեղ նա պահվում է, պարտականություն է դրվում ապահովել կասկածյալի կամ մեղադրյալի պատշաճ վարքագիծը, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով նրա ներկայանալը և այլ դատավարական պարտականություններ կատարելը: Անչափահասի նկատմամբ որպես խափանման միջոց հսկողության հանձնելը կիրառելու դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմինը նրա ծնողներին, խնամակալներին, հոգաբարձուներին, փակ մանկական հիմնարկի վարչակազմի ներկայացուցչին ծանոթացնում է կայացված որոշմանը և նրանց հանձնում որոշման պատճենը, ծանոթացնում է կասկածանքի կամ մեղադրանքի բովանդակությանը, նրանց բացատրում է իրենց իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը, ինչն արտացոլվում է արձանագրությունում: Ծնողները, խնամակալները, հոգաբարձուներն իրավունք ունեն հրաժարվել անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ հսկողություն իրականացնելուց:

Անչափահասի հարցաքննությունը անընդմեջ չի կարող գերազանցել երկու ժամը: Հարցաքննությունը թույլատրվում է շարունակել միայն հարցաքննվող անձին հանգստի և սնվելու համար անհրաժեշտ առնվազն մեկ ժամ ընդմիջում տրամադրելուց հետո: Ինչ վերաբերում է օրվա մեջ հարցաքննության ընդհանուր տևողությանը, ապա այն չի կարող չափահաս անձի դեպքում գերազանցել ութ, իսկ անչափահասի դեպքում չի կարող գերազանցել վեց ժամը: Անչափահաս վկան կամ անչափահաս տուժողը, անկախ տարիքից, կարող է հարցաքննվել՝ պայմանով, որ նա կարող է հաղորդել գործի համար նշանակություն ունեցող տեղեկություններ: Մինչև տասնվեց տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննությունը կատարվում է մանկավարժի մասնակցությամբ: Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննությանը ներկա գտնվելու իրավունք ունի նրա օրինական ներկայացուցիչը: Հարցաքննությունը սկսելուց առաջ օրինական ներկայացուցչին բացատրվում են հարցաքննությանը ներկա գտնվելու, քննիչի թույլտվությամբ իր դիտողությունները շարադրելու և հարցեր

տալու իր իրավունքները, ինչպես նաև պարտականությունները: Քննիչն իրավունք ունի չընդունելու տրված հարցերը, սակայն դրանք պետք է ներառվեն արձանագրությունում: Տասնվեց տարին չլրացած վկային կամ տուժողին բացատրվում է գործին վերաբերող ամեն ինչի մասին ճշմարտացիորեն պատմելու նրա պարտականությունը, բայց նա չի նախազգուշացվում ցուցմունքներ տալուց հրաժարվելու կամ խուսափելու կամ ակնհայտ սուտ ցուցմունքներ տալու համար օրենքով սահմանված պատասխանատվության մասին:

Անչափահաս կասկածյալի և մեղադրյալի վերաբերյալ գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր բնույթ է կրում:

Այսպիսով, վերոգրյալից պարզ է դառնում, որ քրեադատավարական տեսանկյունից հատուկ մոտեցում է ցուցաբերվում անչափահասի նկատմամբ, որը միտված է նախ և առաջ անչափահասի իրավունքների պաշտպանության ապահովմանը, ինչպես նաև անչափահասին ուղղվելու հնարավորություն տալուն:

Աղավնի Մադոյան

*ՀՀ փաստաբանների պալատի
երիտասարդական խորհուրդ*